Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «ՀՀ Լոռու մարզի Դարպասի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ

Թեմա՝ «Ուսումնառության ակտիվ մեթոդները սովորողների ներգրավվածության բարձրացման միջոց»

Վերապատրաստող, մենթոր՝ Լ.Մ.Քալաշյան

Ուսուցիչ՝ Ռ.Ռ.Մալերյան

2023

Բովանդակություն

Ներածություն 3-4

Գլուխ 1

Ներառող դասավանդում 5-7

Համընդհանուր ուսումնառության ձևավորում 8-9

Գլուխ 2

Ինչպես է մարդը սովորում 10-11

Ինչպես խթանել սովորողների ներառումը դասարանում 11-14

Սովորողների ներգրավվածությունը բարձրացնող արդյունավետ հնարներ և մեթոդներ 14-18

Եզրակացություն 19-20

Գրականություն 21

Ներածություն

«Կրթությունը չի փոխում աշխարհը, այն փոխում է այն մարդկանց, ովքեր պատրաստվում են փոխել աշխարհը» Պաուլո Ֆրեյր:

Առանց կրթության ապագա չկա: Այսօրվա երեխաները կլինեն վաղվա ղեկավարները:

Աշխարհի բոլոր երեխաներն իրենց անհատական ուժեղ և թույլ կողմերով ունեն կրթության իրավունք:

ՀՀ-ում երեխաների իրավունքները, նրանց պաշտպանվածությունը մշտապես հոգածության առարկա են, քանի որ յուրաքանչյուր երեխա լիարժեք անձ է՝ անկախ իր առանձնահատկություններից:

1989 թվականի նոյեմբերի 20-ին ՄԱԿ-ը հաստատել է «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիան, որը հետագայում ընդունվեց աշխարհի բոլոր երկրներում:Ըստ որի.

- Բոլոր երեխաներն ունեն հավասար իրավունքներ և հավասարապես պաշտպանված են՝ անկախ ծագումից, լեզվից, ազգությունից, կրոնից, սեռից, սոցիալական կարգավիճակից, առողջական վիճակից և այլն:

- Մեծահասակներն ամենուր ապահովում են երեխաների անհրաժեշտ անվտանգությունը, նրանց առողջ կենսակերպը, հոգեկան և ֆիզիկական զարգացումը, սոցիալականացումը, համակողմանի դաստիարանը, կրթությունը՝ հաշվի առնելով երեխաների անհատական զարգացման առանձնահատկությունները:
- Ընտանիքը, մանկապարտեզը, դպրոցը և սոցիալական միջավայրը գործունեության տարբեր ձևերի կիրառման ընթացքում (խաղ, պարապմունք, զբոսանք, դաս, ժամանց, այլ)
- երեխաներին մատչելի կերպով պարզաբանում և սովորեցնում են իրենց իրավունքները և օգնում գիտակցված օգտվել դրանցից:
- Մեծահասակները, մանկավարժները հարգում են յուրաքանչյուր երեխայի անվան, ազգանվան, քաղաքացիության, ընտանիքում ապրելու, ծնողների հետ շփվելու (եթե այն երեխայի համար վտանգ չի հանդիսանում) իրավունքը:

• Յուրաքանչյուր երեխա ունի խոսքի, մտքի, կարծիքի, ստեղծագործելու, տեղեկատվական տիրույթից տարիքին համապատասխան օգտվելու, իր հետաքրքրություններին, կարիքին համապատասխան ընտրություն կատարելու իրավունք, եթե այն չի սահմանափակում այլ երեխաների իրավունքները:

• Պետությունը ելնում է հասարակության մեջ երեխային լիարժեք կյանքի նախապատրաստման, նրա մեջ հասարակական և ստեղծագործական ակտիվության զարգացման, բարոյական բարձր հատկանիշների, հայրենասիրության և, որպես քաղաքացի դաստիարակման առաջնահերթության սկզբունքներից: Երեխան գտնվում է հասարակության և պետության հովանավորության ու պաշտպանության ներքո: Երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք

ԳԼՈՒԽ 1

Ներառող դասավանդում

Ներառումը փիլիսոփայություն է, որը միավորում է տարբեր աշակերտներին, նրանց ընտանիքներին, մանկավարժներին և համայնքի անդամներին:

Ներառական կրթությունն այն կրթությունն է, որի դեպքում բոլոր աշակերտների հանդեպ պետք է ապահովվի հավասար, սակայն ոչ նույնակերպ վերաբերմունք՝ ստեղծելով սովորողների հետ համագործակցող, նրանց աջակցող և դաստիարակող միջավայր, որը պետք է տրամադրի բոլոր անհրաժեշտ ծառայությունները, պայմաններն ու հարմարությունները, որպեսզի աշակերտները կարողանան հասնել հաջողությունների: Այս միջավայրը պետք է նաև ընդգծի միմյանց նկատմամբ հարգալից վերաբերմունքը և նպաստի, որ երեխաները սովորեն ընկալել միմյանց անհատական տարբերությունները՝ որպես իրողություն:

Ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքի ապահովումն է:Հասարակության զարգացմանը զուգընթաց կրթության կայուն զարգացումն ապահովելու համար մշակվում են ուսումնառության ապահովման տարաբնույթ միջոցառումներ,որոնք լայն հնարավորություններ են ընձեռում բոլոր սովորողներին գիտելիքների ձեռքբերման, կարողությունների ձևավորման և հմտությունների զարգացման գործընթացում:Դրանցից մեկը «Կրթություն բոլորի համար»համաշխարհային շարժումն է, որի նպատակն է ապահովել որակյալ հիմնական կրթություն բոլոր երեխաների, երիտասարդների և

մեծահասակների համար :«Որակյալ կրթությունը բոլորի համար » իր մեջ ներառում է մատչելիություն հավասարություն,համագործակցություն:

Մատչելիություն Ներառական կրթությունը ենթադրում է կրթության մատչելիություն բոլոր երեխաների համար՝ նրանց ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված հարմարեցումների ապահովմամբ,ինչը հանրակրթական դպրոց մուտք գործելու այցեքարտ է դառնում յուրաքանչյուր երեխայիհամար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

Հավասարություն - Կրթական գործընթացը պետք է կազմակերպվի այնպիսի մեթոդներով և մոտեցումներով, որոնք հասանելի և արդյունավետ կլինեն բոլոր սովորողների, այլ ոչ թե սովորողների կոնկրետ խմբերի համար և ուղղված կլինեն յուրաքանչյուր երեխայի առանձնահատկություններից բխող կարիքների

Համագործակցություն - Սովորողների,ծնողների, ուսուցիչների, հոգեբանների, լոգոպեդների և մասնագիտական այլ ծառայություններ տրամադրող անձանց սերտ համագործակցությունը նպաստում է երեխայի կարողությունների, հմտությունների զարգացմանը, կրթական գործընթացի բարելավմանը:

●Կրթությունը պետք է հիմնված լինի բազմազանության, այլ ոչ թե միանմանության սկզբունքի վրա: Բազմազանությունը պետք է դիտարկել որպես կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման ռեսուրս, այլ ոչ՝ որպես խոչընդոտ:

●Առանձնահատկությունները մարդուն տրված են բնությունից: Յուրաքանչյուր երեխա առանձնահատուկ է, ինչը նպաստում է ուսումնական գործընթացի հարստացմանը:

Կրթության առանձնահատուկ պայմանների

կարիք ունեցող երեխաները պետք է լինեն կրթության մի մաս, այլ ոչ թե տարբերակման կամ պիտակավորման օբյեկտ:

Ուսումնական հաստատությունները լավագույնմիջավայրն են, որտեղ կրթության,դաստիարակության, իրականացվող սոցիալ-հոգեբանական աշխատանքների միջոցով հնարավոր է երեխաների մոտ ձևավորել հանդուրժողականության գաղափարախոսությունը որպես հասարակության

արժեհամակարգ՝ դրանով իսկ նպաստելով խտրականության հանգեցնող պատճառների նվազեցմանը, ինչու չէ՝ նաև վերացմանը:

Ներառական կրթությունը բացառում է ամեն տեսակի խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ,կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող անձանց համար:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ այն դեպքերում երբ բոլոր երեխաները սովորում են միասին, և նրանց տրվում է համապատասխան ուղղորդում և աջակցություն, ապա նրանք բոլորն էլ ձևավորում են կարևոր սոցիալական հարաբերություններ, դրական վարք և առաջադիմում են ուսուցման գործընթացում:

Ինտելեկտուալ կամ մտավոր խնդիրներ ունեցող սովորողները, ովքեր ներառված են եղել հանրակրթական դպրոցներում,

ավելի մեծ առաջընթաց են ունեցել գիտելիքների ձեռքբերման տեսանկյունից, քան հատուկ դպրոցներում սովորողները :

Լավագույն կրթական համակարգը ոչ միայն հեշտացնում է ուսուցումը, այլև նպաստում է բազմազանություն ունեցող սոցիալական աշխարհում երեխայի ներգրավմանը՝ ապահովելով համապատասխան պայմաններ բոլոր դպրոցական միջոցառումներին՝ մրցույթներին, ներկայացումներին, էքսկուրսիաներին նրա ակտիվ մասնակցության համար:

Կրթության առանձնահատուկ պայմաններ չունեցող սովորողներն ավելի լավ արդյունքների են հասել մաթեմատիկայից և ընթերցանությունից, երբ կրթություն են ստացել ներառական միջավայրում:

Յուրաքանչյուր պետություն և հասարակություն պետք է մշակի և իրագործի այնպիսի գաղափարներ, որոնք հնարավորություն կտան յուրաքանչյուր երեխայի հաճախել իր բնակավայրին մոտ գտնվող ուսումնական հաստատություն:

Ուսումնառության համընդհանուր ձևավորումը, որը ենթադրում է տեղեկատվությունը սովորողներին հաղորդելու, նրանց ընկալումը ստուգելու, դասապրոցեսի ժամանակ ակտիվ մասնակցությունը խթանելու մեթոդների և մոտեցումների ամբողջություն, պետք է կիրառվի բոլոր ուսումնական հաստատություններում :

ՈՒՀՁ Ուսումնառության Համընդհանուր ձևավորում



Ուսումնառության համընդհանուր ձևավորման առանցքային առանձնահատկությունն այն է, որ վերջինս հիմնված է գլխուղեղի մասին կոգնիտիվ նեյրոգիտության հետազոտությունների արդյունքների վրա: Այն ընդգրկում է գլխուղեղի երեք հիմնական ցանցերը, որոնք կապված են ուսումնառության հետ

1. Հուզական նյարդային ցանցեր – պատասխանատու են հույզերի և ապրումների համար և տեղակայված են գլխուղեղի միջին հատվածներում: Այս ցանցերը ներկայացնում են ուսումնառության «ինչու»-ն, այսինքն՝ պատասխանատու են ընկալվող տեղեկատվության նշանակալիության կամ կարևորության գնահատման համար:

2. Ճանաչողական նյարդային ցանցեր - տեղակայված են գլխուղեղի կեղևի հետին հատվածում և կարող են բնորոշվել որպես ուսումնառության «ինչ»-ը, այսինքն՝ պատասխանատու են տեղեկատվության ճանաչման և ընկալման համար:

3. Ռազմավարական նյարդային ցանցեր – տեղակայված են գլխուղեղի կեղևի առաջնային հատվածում, օրինակ՝ ճակատային բլթերում: Այս ցանցերը պատասխանատու են ուսումնառության «ինչպես»-ի, այսինքն՝ պլանավորման, կազմակերպման և կիրառման համար:

Այս նյարդային ցանցերն ուղղակիորեն փոխկապակցվում են ՈՒՀՁ երեք սկզբունքների հետ, որոնք առաջադրում են կրթության մատչելիության և ուսումնառության պլանավորման շրջանակները: Այդ սկզբունքներն են.

Ներգրավման ձևերի բազմազանություն, որը հնարավորություն է տալիս շարժել սովորողների հետաքրքրասիրությունը, նրանց համապատասխան խնդիրներ առաջադրել և խթանել սովորելու:

Ներկայացման ձևերի բազմազանություն, որը սովորողներին բազմազան եղանակներ է առաջարկում տեղեկատվություն և գիտելիք ստանալու համար:

Արտահայտման ձևերի բազմազանություն, որը սովորողներին բազմազան եղանակներ է առաջարկում՝ ցուցադրելու իրենց իմացածը:

ԳԼՈՒԽ 2

Ինչպես է մարդը սովորում

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը:Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը:

Եթե կարողանաք մարդու ուշադրությունը գրավել, ապա կարող եք տիրանալ նրա ժամանակին ու ազդել նրա վրա:

Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է համացանցի տարբեր գործունեության տեսակների կողմից նրանք զբաղված են ֆուտբոլային հանդիպումներ, սերիալներ դիտելով ու տարատեսակ խաղերով, աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը:

Եվ այդ մրցակցության մեջ կրթությունը պարտվողի դերում է: Մարդկային ապրելակերպում ընդունված է, որ ի տարբերություն չափահասների՝ երեխաները ոչնչով զբաղված չեն: Հետևաբար՝ նրանք իրենց ժամանակի մեծ մասը պետք է օգտագործեն սովորելու,նոր գիտելիքներ ձեռք բերելու համար:

Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը



Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող

նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ: Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են, այսինքն՝ մարդը չի կարող միանգամից շատ բան սովորել: Ըստ գիտնականների՝ մարդը կարող է միանգամից սովորել լավագույն դեպքում 9-10 նոր բան: Որոշ գիտնականներ ավելի հոռետես են և համարում են, որ մարդը կարող է սովորել 4-5 նոր բան

Այս հանգամանքը շատ կարևոր է, քանի որ մեր դասագրքերում, դասերի ժամանակ հաճախ ականատես ենք լինում իրավիճակների, երբ կարճ ժամանակում աշակերտներին փոխանցվում են մի քանի տասնյակ նոր անուններ, տերմիններ ու հասկացություններ: Իսկ ի՞նչ կարելի է անել, որ աշակերտները հնարավորինս շատ բան սովորեն: Մասնագետները խորհուրդ են տալիս նոր նյութը սովորեցնել կապակցված: Խորհուրդ է տրվում օգտագործել գծապատկերներ, պատմություններ, որպեսզի աշակերտները կարողանան լավ յուրացնել նյութը: Կարևոր է նաև նյութի կապակցված ուսուցումը: Եթե ուսուցանում եք անջատ փաստեր, ապա աշակերտները քիչ բան կարող են սովորել:Նոր գիտելիքներ ձեռք բերելու աշակերտի հնարավորությունը մեծապես կախված է այն բանից, թե գիտելիքների նախնական ինչ պաշար ունի աշակերտը: Մեր գիտելիքների պաշարը պահեստավորվում է երկարատև հիշողության մեջ: Այն աշակերտները, ովքեր ունեն գիտելիքների հարուստ պաշար, ավելի շատ բան կարող են վերցնել նոր ուսուցանվող նյութից:

Սրանից կարելի է կարևոր եզրահանգում կատարել ՝ որքան շատ գիտելիքներ ունեք, այնքան հեշտ ու շատ կարող եք նոր բաներ սովորել:

Ինչպես խթանել սովորողների ներառումը դասարանում

Որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռնվեն: Պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկումը, այլև խորությունը:Այն է՝ աշակերտը կարողանա ստացած գիտելիքները գործնականում կիրառել :

Վերջին տարիներին շատ մարդիկ փորձում են գիտելիքն ու մտածողությունը հակադրել իրար։ Հաճախ ենք լսում արտահայտություններ, որ Google-ն ամեն ինչ գիտի։ Հետևաբար, մեր խնդիրը գիտելիք ունենալը չէ, այլ մտածողության հմտությունները զարգացնելը։

Բայց այդպես չէ։ Այսօր էլ հիմնային գիտելիքը ուսուցման հիմքն է։ Ոչ մի բժիշկ չի կարող բարդ վիրահատություններ անել առանց հիմնային գիտելիքի։ Ոչ մի պատմաբան չի կարող վերլուծություններ անել առանց անուններ և թվականներ հիշելու։

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները։ Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և

աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը։ Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ։

Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար։ Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը։ Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար։ Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի։

Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»։ Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է։

Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում։ Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս։ Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին։

Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում կիրառվող մոտեցումը կարող է մի այլ դասարանում նպատակահարմար չլինել:

Հետևաբար, ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

Դասապրոցեսին սովորողների ներառման գործում մեծ խթան է հանդիսանում ուսուցման տարբեր հնարներն ու մեթոդները:

Այստեղ կարևորում եմ ուսուցչի ճիշտ մոտեցումը՝ելնելով դասարանի առանձնահատկություններից՝ կարողանա ընտրել ուսուցման ճիշտ և մոտիվացնող մեթոդ:

Սեփական փորձս ցույց է տալիս , որ երբ խմբային աշխատանքի ժամանակ խմբում գտնվող աշակերտները ունեն հավասար ունակություններ , նրանք ավելի մեծ պատասխանատվությամբ են կատարում տրված առաջադրանքը:

Այս դասը իրականացրել եմ 16 աշակերտից (10 տղա , 6 աղջիկ) կազմված դասարանում : Ձևավորել էի 5 խումբ , յուրաքանչըուրին հանձնարարել կատարել միևնույն թեմային վերաբերվող տարբեր բարդության առաջադրանքներ: Դասի ավարտին պարզ դարձավ , որ խմբերում չկային չաշխատող սովորողներ. արդյունքում խմբի բոլոր աշակերտը ըստ իրենց ունակությունների որոշակի գիտելիքներ ձեռք բերեցին:

Ուսումնական նյութը մատչելի դարձնելուն շատ են օգնում ճանաչողական այցերը, դիդակտիկ պարագաները և նյութերը՝ այն ամենը, ինչը ակադեմիական կրթությունը մոտեցնում է կյանքին:

Երբ ֆիզիկայի դասն անցկացրեցինք ջրմուղում, աշակերտներն իրենց հուզող հարցերի պատասխաններն ստացան նեղ մասնագետներից, ականատես եղան, թե ինչպես է աշխատում ջրամատակարարման պոմպը, թե ինչպես է ջուրը բարձր դիրքից ինքնահոս եղանակով տեղափոխվում և հասանելի դառնում սպառողին, աշակերտ-ների մոտ հիմնավորվեց Պասկալի օրենքից ստացած գիտելիքները :

Սովորողների ներգրավվածությունը բարձրացնող արդյունավետ հնարներ և մեթոդներ

Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները:

Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին:

Ներկայացնենք դասը սկսելու մի քանի հնարներ:

1. Խորհրդավորություն

Երեխաները սիրում են գաղտնիքներ: Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է նրանց: Երեխաները ցանկանում են րոպե առաջ բացահայտել գաղտնիքը:

Հետևաբար՝ երբեմն կարելի է դասը սկսել հետևյալ նախադասությամբ.



2. Զարմանք, անսպասելիություն

Երեխաները սիրում են զարմանալ: Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը: Հետևաբար՝ դասը անսպասելի նորությունով սկսելը շատ կարևոր է:

Այս համատեքստում կարելի է

օգտագործել հակափաստական

մտածողությունը:

Օրինակ՝ կարելի է դասի սկզբում

հարցնել՝ ի՞նչ կլիներ, եթե

Գոյություն չունենար մարմինների փոխազդեցությունը և տիեզերական ձգողությունը,գոյություն չունենար մթնոլորտը և մթնոլորտային ճնշումը:

Աշակերտները սկսում են կատարել տարբեր մեկնաբանություններ և եզրակացություններ:

3 Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈՒՍ)

Դասը սկսելու շատ հայտնի հնար է նաև ԳՈՒՍ-ը: Դասասկզբում ուսուցիչը գծում է Մ-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում

եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտներին հետևյալ հարցով. ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին: Ապա լրացվում է *գիտեմ* սյունակը:

Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում է *ուզում եմ իմանալ* սյունակը: Դասի վերջում լրացվում է *սովորեցի* սյունակը:



6. Մտագրոհ

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը: Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները: Վերջին տարիներին մասնագետները մտահոգություն են հայտնել մտագրոհի հետ կապված: Բանն այն է, որ դասերի ժամանակ ակտիվ աշակերտները մենաշնորհում են մտագրոհը: Դանդաղ մտածող, ոչ ակտիվ աշակերտները կարող են դուրս մնալ մտագրոհից: Դրա համար առաջարկվում է օգտագործել նաև մտագրոհի գրավոր տարբերակը: Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է թղթի վրա գրել իրենց մտքերը և հանձնել իրեն: Այս մոտեցումը չի փոխարինում բանավոր մտագրոհին: Պարզապես լրացնում է այն:

7 Լուսակիր

Ժամանակի սղության պատճառով շատ հաճախ ուսուցիչները դասապրոցեսում իրենց տված հարցերին մեկ-երկու աշակերտից պատասխան ստանալուց հետո առաջ են անցնում: Այս մոտեցումն ուսուցչին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու, թե ինչ չափով են տվյալ թեման յուրացրել դասարանի բոլոր աշակերտները:

Նման իրավիճակում օգտակար է լուսակիր հնարի կիրառումը: Թեման ավարտելուց հետո ուսուցիչը դասարանին հարցնում է թեմայի յուրացման մասին: Յուրաքանչյուր աշակերտ բարձրացնում է իր մոտ գտնվող կանաչ, դեղին, կարմիր թղթերից որևէ մեկը:



Եթե աշակերտը բարձրացնում է կանաչ թերթիկը, նշանակում է ամբողջությամբ յուրացրել է տվյալ թեման: Եթե բարձրացնում է դեղին թերթիկը, նշանակում է մասնակի է յուրացրել թեման: Իսկ կարմիր թերթիկ բարձրացնում են այն աշակերտները, ովքեր չեն յուրացրել թեման: Եթե կարմիր և դեղին թերթիկներ բարձրացնող աշակերտների թիվը շատ մեծ է, ապա նախընտրելի է, որ ուսուցիչը նորից անդրադառնա թեմային: Իսկ եթե թիվը մեծ չէ, ապա կանաչ գույն բարձրացրած աշակերտներին կարելի է հանձնարարել աջակցել իրենց դասընկերներին:

8 Կիսատ նախադասություն

Կիսատ նախադասություն
Ես այսօր սովորեցի ...
Ինձ զարմացրեց ...
Այսօրվա դասի ամենաօգտակար բանը ...
Ինձ հետաքրքրեց ...
Այս դասի ժամանակ ինձ ամենաշատը դուր եկավ ...
Մի բան, որ չհասկացա ...
Մի բան, որ կուզեի ավելին իմանալ ...
Այս դասից հետո ես զգում եմ ...
Այս դասից ավելին կսովորեի, եթե ...

Պատկերում բերված կիսատ նախադասությունների լրացումն օգնում է աշակերտներին ամփոփել դասը: Իր ընտրությամբ, ուսուցիչը կարող է տալ այս նախադասություններից մի քանիսը կամ բոլորը՝ աշակերտներին հնարավորություն ընձեռելով իրենց ցանկությամբ ընտրել այն կիսատ նախադասությունները, որոնք կուզենան ավարտել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսօր հայ ժողովրդի առջև ծառացած խնդիրները լուծելու և այս ծանր վիճակից դուրս գալու միակ ճանապարհը որակյալ կրթություն ունենալն է:

Ուսումնասիրելով և կիրառելով դասավանդման տարբեր մեթոդներ , վերլուծելով սովորողների այդ թվում նաև ԿԱՊԿ ունեցող աշակերտների առաջընթացը , բացահայտելով տարբեր տարիքային առանձնահատկություններ ունեցող աշակերտների ուսուցման մոտիվները, ինչպես նաև կատարելով փորձի փոխանակում այլ ուսուցիչների հետ գալիս ենք հետևյալ եզրակացության .

- Կրթության զարգացումն ապահովելու համար ուսուցիչը պետք է կիրառի ուսուցումը հետաքրքրացնող տարբեր մեթոդներ ,իրականացնի ճանաչողական այցեր և տարաբնույթ ալյ միջոցառումներ :Օրինակ **«Հիդրոստատիկ ճնշում» թեման ուսումնասիրելիս, երբ դասարանի թվով 30 աշակերտների հետ ճանաչողական այց կատարեցիք դեպի ջրամաքրման և ջրամատակարարման կայան ,աշակերտների համար ավելի պատկերավոր ու մնայուն դարձան թեմայից ստացած գիտելիքները:**

- Որակյալ կրթություն ունենալու համար դասարանում պետք է ապահովել համագործակցություն և հավասարություն:Ընդ որում հավասարությունը արդարություն չէ : Ուսուցիչը հավասար վերաբերմունք պետք է ցուցաբերվի բոլոր սովորողների այդ թվում ԿԱՊԿ ունեցող երեխաների նկատմամբ,իսկ արդարությունը ապահովելու համար ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկությունները : Կրթական գործընթացը պետք է կազմակերպվի այնպիսի մեթոդներով և մոտեցումներով, որոնք հասանելի և արդյունավետ կլինեն բոլոր սովորողների, այլ ոչ թե սովորողների կոնկրետ խմբերի համար և ուղղված կլինեն յուրաքանչյուր երեխայի առանձնահատկություններից բխող կարիքների: Կրթությունը պետք է հիմված լինի բազմազանության ,այլ ոչ թէ միանմանության սկզբունքի վրա : Անդրադառնալով վերոհիշըալ խմբային աշխատանքին, կարող եմ փաստել ,որ յուրաքանչյու խումբ ունենալով բարդության տարբեր աստիճանի առաջադրանքներ, ցուցաբերեցին սպասվածից ավելի արդյունքներ:

- Որպեսզի ուսուցիչը սովորողին գիտելիք հաղորդի անհրաժեշտ է կենտրոնացնի նրա ուշադրությունը ,որի համար շատ կարևոր է դասի հաջողված ու տպավորիչ սկիզբը։
- Դասապրոցեսին սովորողների ներառման գործում մեծ խթան է հանդիսանում ուսուցման տարբեր հնարներն ու մեթոդները։
- Այստեղ կարևորում եմ ուսուցչի ճիշտ մոտեցումը ելնելով դասարանի առանձնահատկություններից կարողանա ընտրել ուսուցման ճիշտ և մոտիվացնող մեթոդ։
- Կիրառելով ուսումնառության տարաբնույթ մեթոդներ `ուսուցիչը միաժամանակ պետք է հաշվի առնի որ ըստ գիտնականների սովորողը կարող է յուրացնել 4-5 նոր միտք կամ գաղափար ։Այսուհանդերձ անհրաժեշտ է նոր նյութը մատուցելիս հիմնվել նախորդ դասին ստացած գիտելիքների վրա ։Այն աշակերտները, ովքեր ունեն գիտելիքների հարուստ պաշար, ավելի շատ բան կարող են վերցնել նոր ուսուցանվող նյութից։ Հիմք ընդունելով այս փաստը ,ես յուրաքանչյուր դասին անպայման անդրադարձ եմ կատարում նախորդ դասերին ,աշակերտները հիշում են նախորդ դասերից ստացած գիտելիքները ,որոնց վրա էլ հիմնվելով ներկայացնում եմ նու դասը ։Այսպիսով կապ եմ ստեղշում արդեն յուրացված և նոր ստացած գիտեկիքների մեջ։Սրանից կարելի է կարևոր եզրահանգում կատարել ` որքան շատ գիտելիքներ ունեք, այնքան հեշտ ու շատ կարող եք նոր բաներ սովորել։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1Ս.Խաչատրյան, Կամուրջներ պատերի փոխարեն, Անտարես, Երևան, 2014.

2Agarwal, Pooja K. Powerful Teaching. Wiley. Kindle Edition.

3Sherrington, Tom. Rosenshine's Principles in Action, John Catt Education, 2019

4Taylor, K& Rohrer, D., "The Effects of Interleaved Practice", Applied Cognitive Psychology 24: 837–848 (2010).

http://uweb.cas.usf.edu/~drohrer/pdfs/Taylor&Rohrer2010ACP.pdf

5Willingham, Daniel T. Why Don't Students Like School?: A Cognitive Scientist Answers Questions About How the Mind Works and What It Means for the Classroom. Wiley. Kindle Edition.

6Ադամյան Հ.Ա., Մարգարյան Լ.Հ., Մանկավարժահոգեբանական գնահատմանև աջակցության գործընթացների կազմակերպումն աջակցությանկենտրոններում, 7Ձեռնարկ, Երևան, 2019, 86 էջ:

8.Ազարյան Ռ. Ն. Երեխայի տեսողությունը: Մեթոդական ձեռնարկ ծնողներիհամար, Երևան, «Ասողիկ», 2008:

9.Աստվածատրյան Ս. և ուրիշներ, Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում, Երևան, 2001:

10.Ավագյան Ա.Վ., Գրիգորյան Ա.Գ., Թադևոսյան Է. Ռ., Կարապետյան Ս. Գ.,Կիրակոսյան Ա. Ա., Հովյան Գ. Ռ., Չարչյան Ա. Ռ. Պայլոզյան Ժ., Լոգոպեդիանգործնականում, Ասողիկ, 2017, 76 էջ:

11.Արզումանյան Ս. Հոգեբանություն, Երևան, Զանգակ-97, 2003, 176 էջ:

12.Գասպարյան Ա., Հովակիմյան Գ., Գալստյան Մ., «Խտրականության փորձագիտական ընկալումները Հայաստանում» որակական հետազոտության արդյունքների վերլուծություն, Երևան, 2015, 36 էջ:

13.Գասպարյան Խ.Վ., Բժշկական հոգեբանություն ուսումնական ձեռնարկ

14Խաչատրյան Ս., Մեսրոպյան Ն., ՏՀՏ գործիքների կիրառումը ներառող դասավանդման համատեքստում, Առցանց ինքնուղղորդվող դասընթաց, ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան, 15«Դասավանդի՛ր Հայաստան» կրթական հիմնադրամ, Երևան, 2021:

https://hmk.am/nerarogh-dasavandum-metodakan-dzernark-mankavarzhneri-hamar/

https://hmk.am/wp-content/uploads/2021/03/dzernark-mankavarjneri-hamar.pdf

16 Հայրապետյան Գ., Խաչատրյան Մ., «Զգու՛յշ, երեխաներ են». ուղեցույց երեխաների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ. երեխաների և բոլորի համար: ՅՈՒՆԻՍԵՖ, 2018, 44 էջ: